ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2012

ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ

«ՀՀ պետական պարտքի 2012թ. առաջին կիսամյակի հաշվետվությունը» հրատարակվել է ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ - գլխավոր գանձապետ Ա. Ջանջուղազյանի և պետական պարտքի կառավարման վարչության պետ Ա. Մարգարյանի ընդհանուր խմբագրությամբ:

Նյութերը կազմել են ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի պետական պարտքի կառավարման վարչության աշխատակիցներ Ա. Մարությանը, Ն. Գրիգորյանը, Մ. Հարությունյանը, Ա. Եգանյանը, Ս. Խանվելյանը, Ք. Խաչատրյանը, Հ. Ստեփանյանը, Ա. Համբարձումյանը, Մ. Մելիքյանը, Գ. Վարդապետյանը, Ա. Խաչատրյանը:

Բովանդակություն

ՀՀ պետական պարտքը 2003-2012թթ. – 3

ՀՀ ներքին պետական պարտքը – 4

Գանձապետական պահառու – 10

ՀՀ արտաքին պետական պարտքը – 13

Հապավումներ

ՆՊՊ ներքին պետական պարտք
ՊՊ պետական պարտատոմսեր
ՊԿՊ պետական կարճաժամկետ պարտատոմսեր
ՄԺՊ միջին ժամկետայնության պարտատոմսեր
ԵՊ երկարաժամկետ պարտատոմսեր
ԽՊ խնայողական պարտատոմսեր
ԳՊ Գանձապետական պահառու

ՀՀ պետական պարտքը 2003-2012թթ.

	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	30.06.2012
	մլրդ դրամ													
Պետական պարտք	487.3	504.4	545.2	640.6	664.4	621.1	546.2	508.9	516.2	584.6	1,270.7	1,379.3	1,592.7	1,760.6
այդ թվում՝														
արտաքին պարտք	456.1	474.6	508.8	599.8	621.3	574.7	494.9	438.2	440.8	483.7	1,121.1	1,199.0	1,376.5	1,543.4
ներքին պարտք	31.2	29.8	36.4	40.8	43.1	46.4	51.3	70.7	75.4	100.9	149.6	180.3	216.2	217.2
որից														
պետական արժեթղթեր *	31.2	29.8	36.4	40.8	43.1	46.4	51.3	70.7	66.3	92.3	140.6	173.0	210.0	211.4
«ՎՏԲ Հայաստան» ՓԲԸ-ի գծով	-	-	-	-	-	-	-	-	9.1	8.6	9.1	7.3	6.2	5.8

	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	30.06.2012
	մլն ԱՄՆ դոլար													
Պետական պարտք	930.3	913.5	970.4	1,095.3	1,173.9	1,278.5	1,213.3	1,400.1	1,696.8	1,906.0	3,362.7	3,795.0	4,128.7	4,215.5
այդ թվում՝														
արտաքին պարտք	870.8	859.5	905.6	1,025.5	1,097.7	1,182.9	1,099.2	1,205.6	1,448.9	1,577.1	2,966.7	3,299.0	3,568.2	3,695.4
ներքին պարտք	59.5	54.0	64.8	69.8	76.2	95.5	114.1	194.5	247.9	328.9	396.0	496.0	560.5	520.1
որից														
պետական արժեթղթեր *	59.5	54.0	64.8	69.8	76.2	95.5	114.1	194.5	217.9	300.9	372.0	476.0	544.5	506.1
«ՎՏԲ Հայաստան» ՓԲԸ-ի գծով	-	-	-	-	-	-	-	-	30.0	28.0	24.0	20.0	16.0	14.0

ԱՄՆ դոլար / ՀՀ դրամ փոխարժեքը ժամանակաշրջանի վերջի դրությամբ	523.8	552.2	561.8	584.9	566.0	485.8	450.2	363.5	304.2	306.7	377.9	363.4	385.8	417.6

* 2006թ. ներքին պետական պարտքի մեջ ներառված է ՀՀ ԿԲ վերակապիտալիզացիայի նպատակով տրամադրված պարտատոմսերը՝ 12.7 մլրդ դրամ

ՀՀ արտաքին և ներքին պետական պարտքի փոխարկումը կատարվել է ելնելով համապատասխան ժամանակաշրջանի վերջի դրությամբ արժութային շուկայում ձևավորված ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքից՝ աղբյուր ՀՀ կենտրոնական բանկ:

ՀՀ ՆԵՐՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

2012 թվականի հունիսի 30-ի դրությամբ ներքին պետական պարտքը բնութագրող ցուցանիշներն ունեն հետևյալ տեսքը.

- ներքին պետական պարտքն անվանական արժեքով կազմել է 217,213.5 մլն դրամ, որից պետական կարճաժամկետ պարտատոմսեր՝ 25,229.0 մլն դրամ, միջին ժամկետայնության պարտատոմսեր՝ 110,629.6 մլն դրամ, երկարաժամկետ պարտատոմսեր՝ 74,696.6 մլն դրամ, խնայողական պարտատոմսեր՝ 811.3 մլն դրամ, ՀՀ ռեզիդենտից ստացված վարկ՝ 5,847.0մլն դրամ:
- պետական պարտատոմսերի հաշվին պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը կազմել է -1,410.5 մլն դրամ,
- ներքին պետական պարտքի միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 13.3794 %,
- ներքին պետական պարտքի միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 1858 օր (ՊԿՊ-եր՝ 174 օր, ՄԺՊ-եր՝ 844 օր, ԵՊ-եր՝ 3946օր և ԽԱՊ-եր՝ 300 օր):

Աղյուսակ 1

2012 թվականի հունիսի 30-ի դրությամբ ներքին պետական պարտքը բնութագրող ցուցանիշները

(մլն դրամ)

	30.06.2011թ.	30.12.2011թ.	30.06.2012թ.
Ներքին պետական պարտքը (մլն դրամ), այդ թվում՝	**185,592.6**	**216,208.8**	**217,213.5**
Պետական պարտատոմսեր անվանական արժեքով, որից՝	**178,953.1**	**210,036.5**	**211,366.5**
Կարճաժամկետ պարտատոմսեր (մլն դրամ)	26,970.4	32,951.0	25,229.0
միջնաժամկետ պարտատոմսեր (մլն դրամ)	95,592.5	111,200.6	110,629.6
երկարաժամկետ պարտատոմսեր (մլն դրամ)	55,668.2	65,046.0	74,696.6
խնայողական պարտատոմսեր (մլն դրամ)	721.9	838.9	811.3
ՀՀ ռեզիդենտից ստացված վարկ (մլնդրամ)	**6,639.5**	**6,172.3**	**5,847.0**
ՆՊՊ-ի ժամկետայնություն (օր), որից՝	**1825**	**1698**	**1858**
կարճաժամկետ պարտատոմսեր (օր)	135	122	174
միջնաժամկետ. պարտատոմսեր (օր)	957	863	844
երկարաժամկետ պարտատոմսեր (օր)	4151	3940	3946
խնայողական պարտատոմսեր (օր)	426	372	300
ՆՊՊ-ի եկամտաբերությունը (%) որից՝	**12.6989**	**12.9546**	**13.3794**
կարճաժամկետ պարտատոմսեր (%)	9.5822	9.1864	9.1503
միջնաժամկետ պարտատոմսեր (%)	13.0652	13.3209	13.5631
երկարաժամկետ պարտատոմսեր (%)	13.5814	14.2485	14.5490

խնայողական պարտատոմսեր (%)	12.5745	12.2910	12.1630
Դյուրացիա (տարի)	**3.3986**	**3.2467**	**3.3324**

Գծապատկեր 1

2012 թվականի հունիսի 30-ի դրությամբ ներքին պետական պարտքի կառուցվածքը



ԱՌԱՋՆԱՅԻՆ ՇՈՒԿԱ

2012 թվականի առաջին կիսամյակի ընթացքում տեղի են ունեցել ուղենշային պարտատոմսերի 14 տեղաբաշխման աճուրդներ, որից 8-ը՝ ՄԺՊ-ի, 6-ը՝ ԵՊ-ի: Տեղաբաշխման ենթակա ծավալը կազմել է 35.5 մլրդ դրամ, որից տեղաբաշխվել են 32.48 մլրդ դրամ ծավալով պարտատոմսեր: Հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել ՊԿՊ-երի 23 թողարկում՝ 20 մլրդ դրամ ծավալով, որից տեղաբաշխվել է 20 մլրդ դրամը և ԽԱՊ-երի 15 թողարկում՝ 750 մլն դրամ ծավալով, որից տեղաբաշխվել է 208.7 մլն դրամը: Պետական պարտատոմսերի տեղաբաշխման ծավալում ՊԿՊ-ը կազմել են 20 մլրդ դրամ (38%), ԽԱՊ-ը՝0.2 մլրդ դրամ (0.4%), ՄԺՊ-ը՝ 18.1 մլրդ դրամ (34.3%), ԵՊ-ը՝ 14.4 մլրդ դրամ (27.3%): ՊԿՊ-ի մեկ թողարկման միջին ծավալը կազմել է 870 մլն դրամ, ԽԱՊ-ինը՝ 50.0 մլն դրամ, իսկ ՄԺՊ-ի մեկանգամյա տեղաբաշխման ենթակա միջին ծավալը կազմել է 2.4 մլրդ դրամ, ԵՊ-ինը՝ 2.7 մլրդ դրամ: Պետական պարտատոմսերի տեղաբաշխման ենթակա ծավալի նկատմամբ պահանջարկը գերազանցել է 1.67 անգամ և կազմել 92.9 մլրդ դրամ: Հաշվետու ժամանակահատվածում կատարված տեղաբաշխումների միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 1771 օր, միջին կշռված եկամտաբերությունը՝ 12.6594% (տես աղյուսակ 2): Թողարկման առավելագույն ժամկետայնությունը եղել է 20 տարի, նվազագույնը՝ 6 շաբաթ:

Աղյուսակ 2

2012թ. առաջին կիսամյակում պետական պարտատոմսերի եկամտաբերության և ժամկետայնության ցուցանիշներն ըստ ամիսների

	Նվազագույն եկամտաբերություն (%)	Առավելագույն եկամտաբերություն (%)	Միջին կշռված եկամտաբերություն (%)	Տեղաբաշխման միջին կշռված ժամկետ (օր)
Հունվար	9.9800	14.9400	12.9905	798
Փետրվար	6.5000	15.4400	13.0705	1189
Մարտ	7.5000	16.4333	12.2671	2837
Ապրիլ	7.9000	14.6800	11.9447	770
Մայիս	8.2500	15.5000	12.8036	1197
Հունիս	8.2000	16.4797	13.0947	3218
I կիսամյակ	**6.5000**	**16.4797**	**12.6594**	**1771**

Պետական պարտատոմսերի նկատմամբ պահանջարկի 91.5%-ը (85,041.4 մլն դրամ) ձևավորվել է գործակալների և դիլերների սեփական միջոցների, 8.5%-ը (7,900.1 մլն դրամ)՝ ներդրողների հաշվին (որից ԳՊ-ն՝ 0.7%):

Աղյուսակ 3

2012թ. առաջին կիսամյակում շուկայի մասնակիցների ձեռք բերած ՊՊ-երի տեսակարար կշիռները տեղաբաշխման ծավալի մեջ

(տոկոսներով)

	Գործակալներ	Դիլերներ	ԳՊ	Ընդամենը
Հունվար	83.60	14.43	1.97	100.00
Փետրվար	80.63	18.75	0.63	100.00
Մարտ	75.95	22.62	1.43	100.00
Ապրիլ	79.65	19.24	1.11	100.00
Մայիս	87.24	12.76	-	100.00
Հունիս	87.98	9.34	2.68	100.00
I կիսամյակ	**82.45**	**16.31**	**1.24**	**100.00**

Գծապատկեր 2

Պետական պարտատոմսերի շուկայում ներդրողների կառուցվածքը 2012թ. հունիսի 30-ի դրությամբ



Ներդրողների կառուցվածքում շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի զգալի մասը՝ 60%-ը գտնվում է գործակալների և դիլերների մոտ, ռեզիդենտ այլ ներդրողների տեսակարար կշիռը կազմում է 11%, իսկ ոչ ռեզիդենտ ներդրողների մոտ գտնվում է ընդամենը 201.24 մլն դրամ ծավալով պարտատոմսեր: ՀՀ կենտրոնական բանկի մոտ գտնվող պարտատոմսերի 74%-ը (45,430 մլրդ դրամ) կազմում են ռեպո գործառնությունների արդյունքում գրավադրված պարտատոմսերը:

ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱ

- 2012թ. առաջին կիսամյակի ընթացքում երկրորդային շուկայում կատարված գործարքներն ունեն հետևյալ տեսքը՝
- Կատարվել է 479 գործարք, որից
  - միջբանկային շուկայում՝ 394 գործարք
  - ՀՖԲ-ում՝ 59 գործարք
  - ՀՀ կենտրոնական բանկի կողմից՝ 26 գործարք
- Գործարքների ընդհանուր ծավալը կազմել է 95,818.6 մլն դրամ, որից
  - առևտրային բանկերի կողմից՝ 89,698.1 մլն դրամ
  - ՀՖԲ-ում ուղենշային պարտատոմսերով՝ 1,120.5 մլն դրամ
  - ԿԲ-ում՝ 5,000.0 մլն դրամ

Միջբանկային գործարքների ծավալում.

- ՊԿՊ շրջանառության ծավալը կազմել է 3,470.6 մլն դրամ
- ՄԺՊ շրջանառության ծավալը կազմել է 33,184.1 մլն դրամ
- ԵՊ շրջանառության ծավալը կազմել է 53,043.4 մլն դրամ

ՀՖԲ-ի գործարքների ծավալում.

- ՄԺՊ շրջանառության ծավալը կազմել է 629.5 մլն դրամ
- ԵՊ շրջանառության ծավալը կազմել է 491.0 մլն դրամ

ՀՀ կենտրոնական բանկի գործարքների ծավալում

- ՄԺՊ շրջանառության ծավալը կազմել է 1,000.0 մլն դրամ
- ԵՊ շրջանառության ծավալը կազմել է 4,000.0 մլն դրամ

- Կատարված բոլոր գործարքների միջին կշռված եկամտաբերությունը՝ 12.45%,
- Միջին կշռված ժամկետայնությունը՝ 2985 օր,
- Միջին օրական ծավալը՝ 798.5 մլն դրամ,
- Գործարքների միջին օրական քանակը՝ 4:

Գծապատկեր 3

2012 թ. առաջին կիսամյակի ընթացքում կատարված գործարքների ծավալներն ու եկամտաբերություններն ըստ ամիսների



	Հուն.-12	Փետ.-12	Մարտ-12	Ապրիլ-12	Մայիս-12	Հունիս-12
ԿԲ գործ. ծավալ (մլն. դրամ)		2,000	1,000	1,000	1,000	
Միջբանկ. գործ. ծավալ (մլն. դրամ)	16,822	15,542	16,885	15,896	15,641	10,031
ԿԲ գործ. եկ. (%)		15.2	12.7	15.1	15.5	
Միջբանկ. գործ. եկ. (%)	12.1	12.2	12.3	12.9	12.3	12.2

Գծապատկեր 4

2012թ. առաջին կիսամյակում երկրորդային շուկայում կատարված գործառնություններն ըստ ժամկետայնության



	1-91 օր	92-182օր	183-364 օր	1-3 տարի	3-4 տարի	4-5 տարի	6 և ավել տարի
ԿԲ-ի կողմից կատ.գործ. ծավալ (մլն. դրամ)	-	-	500	500	-	-	4,000
Միջբանկ. գործ. ծավալ (մլն. դրամ)	1,497	1,134	3,888	22,402	2,767	5,760	53,370
ԿԲ գործ. եկամտ. (%)			13.78	11.56			15.26
Միջբանկ. գործ. եկամտ. (%)	8.81	9.64	9.54	11.45	10.80	14.71	12.87

Գծապատկեր 5

Կատարված գործարքների մեջ ՊԿՊ-ների, ՄԺՊ-ների և ԵՊ-ների տեսակարար կշիռը (ներառված է նաև ԿԲ-ի կողմից իրականացված գործառնությունները)



Գծապատկեր 6

2012թ. առաջին կիսամյակում երկրորդային շուկայում կատարված գործարքների եկամտաբերության և ժամկետայնության փոխադարձ կապը



ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՀԱՌՈՒ

2012թ. առաջին կիսամյակում Գանձապետական պահառուի կողմից իրականացված գործառնություններն ունեցել են հետևյալ տեսքը.

- մասնակցել է կազմակերպված ԽՊ-երի 15 թողարկումներից 14-ին և ՊԿՊ-երի 23 թողարկումներից 7-ին,
- ներդրման ծավալը կազմել է 858.7 մլն դրամ, որից 650.0 մլն ՊԿՊ-եր և 208.7 մլն ԽՊ-եր,
- մարվել է 836.7 մլն դրամի պարտատոմս, որից 600.5 մլն ՊԿՊ-եր և 236.2 մլն ԽՊ-եր,
- թողարկված ՊԿՊ-երի 3.25% ձեռք է բերվել ԳՊ-ի միջոցով (ԳՊ-ի ձեռք բերման առավելագույն ծավալը սահմանվել է թողարկման ծավալի 10%-ի չափով),
- 2012թ. հունիսի 30-ի դրությամբ ընդամենը շրջանառության մեջ է եղել 1,661.9 մլն դրամի պարտատոմս, որից 850.6 մլն ՊԿՊ-եր և 811.3 մլն ԽՊ-եր (տես գծապատկեր 7),

Գծապատկեր 7

Շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ծավալը 2012թ. հունիսի 30-ի դրությամբ

(մլն դրամ)



- դեպո հաշիվների քանակը կազմել է 973, որոնցից 15-ը բացվել են հաշվետու ժամանակահատվածում (տես գծապատկեր 8),

Գծապատկեր 8

Դեպո հաշիվների դինամիկան 2012թ. առաջին կիսամյակի ընթացքում



	Դեկտ-11	Հունվար-12	Փետրվար-12	Մարտ-12	Ապրիլ-12	Մայիս-12	Հունիս-12
Դեպո հաշիվների քանակը	958	960	962	966	969	972	973

- շրջանառության մեջ եղած պարտատոմսերի միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 248 օր, որտեղ ՊԿՊ-երի համար այն կազմել է 197 օր, իսկ ԽՊ-երի համար՝ 300,
- մեկ ներդրողի կողմից ներդրման միջին ծավալը կազմել է 10.1 մլն դրամ, որտեղ ՊԿՊ-երի գծով այն կազմել է 216.6 մլն դրամ, իսկ ԽՊ-երի գծով՝ 2.5 մլն դրամ,
- ներկայացված հայտերում ներդրման միջին ծավալը կազմել է 7.6 մլն դրամ, որտեղ ՊԿՊ-երի գծով այն եղել է 72.2 մլն դրամ, իսկ ԽՊ-երի գծով՝ 2.02 մլն դրամ:

Աղյուսակ 4

ԳՊ-ի կողմից 2012թ-ի առաջին կիսամյակի ընթացքում ՊԿՊ-երով կատարված գործառնությունները

(մլն դրամ)

Ժամկետը	Մարում	Սպասարկում	Ընդամենը	Տեղաբաշխում	Տեղաբաշխվածի կշիռը թողարկման ծավալի մեջ (%)	Թողարկումների քանակը	Մեկ թողարկման ներդրման միջին ծավալը
1-13 շաբաթ	48.7	1.3	50	50.0	1.4	6	8.3
14-26 շաբաթ	192.1	8.1	200.2	-	-	5	-
27-39 շաբաթ	327.5	22.5	350	250.0	4.2	6	41.6
40-52 շաբաթ	0.3	0.0	0.3	350.0	4.4	6	58.3
Ընդամենը	568.6	31.9	600.5	650.0	3.3	23	28.2

Աղյուսակ 5

ԳՊ-ի կողմից 2012թ-ի առաջին կիսամյակի ընթացքում ԽԱՊ-երով կատարված գործառնությունները

(մլն դրամ)

Ժամկետը	Մարում	Արժեկտրոնի սպասարկում	Ընդամենը	Տեղաբաշ-խում	Տեղաբաշխվածի կշիռը թողարկման ծավալի մեջ (%)	Թողարկումների քանակը	Մեկ թողարկման ներդրման միջին ծավալը
Մինչև 1 տարին ներառյալ	102.1	8.0	110.1	95.0	19.0	10	9.5
1 - 2 տարին ներառյալ	134.2	43.4	177.6	113.7	45.5	5	22.7
Ընդամենը	236.3	51.4	287.7	208.7	27.8	15	13.9

Գծապատկեր 9

ԳՊ-ի միջոցով շրջանառության մեջ եղած պարտատոմսերի կշիռը 2012թ. հունիսի 30-ի դրությամբ



ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

2012 թվականի հունիսի 30-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքը կազմել է 3,695.4 մլն ԱՄՆ դոլար, այդ թվում՝

- ՀՀ կառավարության արտաքին պարտավորությունները՝ 3,085.4 մլն ԱՄՆ դոլար (կամ ընդհանուր պարտքի 83.5%),
- ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունները՝ 610.1 մլն ԱՄՆ դոլար (կամ ընդհանուր պարտքի 16.5%):

2011 թվականի դեկտեմբերի 31-ի համեմատությամբ ՀՀ արտաքին պետական պարտքի ծավալն աճել է 3.6 տոկոսով կամ 127.2 մլն ԱՄՆ դոլարով: Նշված փաստը պայմանավորված է 2012թ. առաջին կիսամյակի ընթացքում կատարված գործառնություններով:

Գծապատկեր 10

ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքն ըստ տրամադրման արժույթի 2012թ. հունիսի 30-ի դրությամբ



2012թ. հունիսի 30-ի դրությամբ ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքում արտոնյալ վարկերի տեսակարար կշիռը կազմել է 55.7%:

2012թ. հունիսի 30-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության արտաքին պարտավորությունների 70.6%-ը կազմել են միջազգային կազմակերպություններից ստացված վարկային միջոցները, իսկ մնացած 29.4%-ը՝ օտարերկրյա պետությունների կողմից տրամադրված վարկերը (տես գծապատկեր 11):

Գծապատկեր 11

ՀՀ վարկատուների կառուցվածքը 2012թ. հունիսի 30-ի դրությամբ



2012 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ արտաքին պետական պարտքի գծով կատարվել են հետևյալ գործառնությունները.

Աղյուսակ 6

ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկումը և արտաքին վարկային միջոցների ստացումները 2012թ. առաջին կիսամյակի ընթացքում

(մլն ԱՄՆ դոլար)

	Ստացում	Սպասարկում		
		ընդա-մենը	այդ թվում՝	
			տոկոսա-վճար	մարում
Ընդամենը	**231.39**	**81.77**	**26.03**	**55.74**
այդ թվում՝				
ՀՀ կառավարության արտաքին պարտավորություններ	***188.18***	***35.38***	***21.43***	***13.95***
Միջազգային կազմակերպություններ	**182.64**	**19.11**	**8.96**	**10.15**
Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ (IBRD)	47.00	1.12	0.54	0.58
Զարգացման Միջազգային Ընկերակցություն (IDA)	56.90	12.15	4.13	8.02
Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ (EBRD)	-	0.65	0.29	0.36
Գյուղ. Զարգացման Միջազգային Հիմնադրամ (IFAD)	0.58	0.93	0.24	0.69
ՕՊԵԿ-ի Միջազգային Զարգացման Հիմնադրամ (OFID)	-	1.05	0.55	0.50
Ասիական Զարգացման Բանկ (ADB)	1.31	1.05	1.05	-
Արժույթի Միջազգային Հիմնադրամ (IMF)	23.43	1.80	1.80	-
Եվրամիություն (EU)	53.42	0.30	0.30	-
Եվրոպական Ներդրումային Բանկ (EIB)	-	0.06	0.06	-
Օտարերկրյա պետություններ	**5.54**	**16.27**	**12.48**	**3.79**
Ռուսաստանի Դաշնություն	-	9.63	9.63	-
Գերմանիա (KfW)	4.10	1.54	0.62	0.91
Ֆրանսիա	-	0.10	0.02	0.08
ԱՄՆ	-	1.52	0.37	1.16
Ճապոնիա (JICA)	0.36	3.41	1.77	1.64
Աբու-Դաբիի Զարգացման Հիմնադրամ	1.08	0.06	0.06	-
Բելգիա	-	0.02	0.02	-
ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորություններ	**43.21**	**46.39**	**4.60**	**41.80**
Միջազգային կազմակերպություններ	**36.49**	**45.69**	**4.15**	**41.54**
Արժույթի Միջազգային Հիմնադրամ (IMF)	26.62	45.61	4.07	41.54
Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ (IBRD)	9.88	0.09	0.09	-
Օտարերկրյա պետություններ	**6.72**	**0.70**	**0.44**	**0.26**
Գերմանիա (KfW)	6.72	0.70	0.44	0.26

2012թ. առաջին կիսամյակի ընթացքում ստորագրվել են հետևյալ վարկային համաձայնագրերը.

Աղյուսակ 7

2012թ. առաջին կիսամյակի ընթացքում ստորագրված ՀՀ արտաքին պետական պարտքի վարկային համաձայնագրերը

Վարկառու/վարկատու/վարկային ծրագիր			Գումար	Արժույթ
ՀՀ կառավարություն				
I	**Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ**			
	1	Զարգացման քաղաքականության գործողությունների III վարկ	30.0	մլն USD
	2	Համայնքային ջրամատակարարման ծրագիր	15.0	մլն USD
II	**Զարգացման Միջազգային Ընկերակցություն**			
	1	Զարգացման քաղաքականության գործողությունների III վարկ	32.6	մլն SDR
	2	Սոցիալական ներդրումների հիմնադրամի III ծրագրի III լրացուցիչ ֆինանսավորում	7.1	մլն SDR
III	**Ասիական Զարգացման Բանկ**			
	1	Ջրամատակարարման և ջրահեռացման սեկտորի ծրագիր (լրացուցիչ ֆինանսավորում)	25.886	մլն SDR
IV	**Ռայֆայզն Բանկ (Raiffeisen Bank International AG)**			
	1.	Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի և Արամ Խաչատրյան համերգասրահների տեխնիկական վերազինման ծրագիր	8.0	մլն EUR
ՀՀ կենտրոնական բանկ				
II	**Գերմանիա (KfW)**			
	1	Գյուղատնտեսության աջակցության ծրագիր	15.0	մլն EUR